## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Առինջ համայնք,ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Առինջ, Հեռ. (010) 61 45 01 ,
E-mail arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

N 127
*14 մարտ 2018թ.*

***ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ***
***ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝ ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՈՅԱՆԻՆ***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի, Ձեզ ենք ներկայացնում Կոտայքի մարզի Առինջ համայնքի ավագանու 2018թվականի մարտի 5-ի թիվ3 արտահերթ նիստի որոշումները, էլեկտրոնային տարբերակով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Բարսեղյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2018թվականի N 8-Ա

## ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով. ***Համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել համայնքի ավագանու 2018թվականի մարտի 5-ի թիվ3 արտահերթ նիստի օրակարգը.

1. Կոտայքի մարզի Առինջ համայնքի 2018թվականի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ) հաստատելու մասին
2. Կոտայքի մարզի Առինջ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին
3. Առինջ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու մասին
4. Պարտավորություն ստանձնելու մասին
5. Համայնքի 2018թվականի սուբվենցիայի ծրագրին մասնակցության մասին

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2. ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
3. ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
4. ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
5. ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
6. ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
7. ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
8. ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2018թվականի N 9-Ա

## ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ/ՏԱՊ/ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ՏԿԶՆ-ն և 2018թվականի հունվարի 12-ի N01/16.2/80-18 հանձնարարականը՝ ***Համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Առինջ համայնքի 2018թվականի տարեկան աշխատանքային պլանը /ՏԱՊ/՝ համաձայն հավելվածի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2.ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
3.ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
4.ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
5.ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
6.ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
7.ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
8.ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2018թվականի N 10-Ն

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի դրույթներով ՝ ***Համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Առինջ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2.ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
3.ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
4.ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
5.ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
6.ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
7.ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
8.ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Առինջ համայնքի ավագանու
2018թ. Մարտի 5-ի N10-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, որպես կանոն, մշակվում և հաստատվում է գոտևորման նախագծի կազմում՝ հավելվածի տեսքով:

1.2. Համայնքի ավագանու որոշմամբ քաղաքաշինական կանոնադրությունը կարող է մշակվել նաև մինչև գլխավոր հատակագծի և (կամ) գոտևորման նախագծի մշակումը՝ որպես առանձին փաստաթուղթ: Այս դեպքում կանոնադրությունը կցվում է նախագծային առաջադրանքին և պարտադիր հաշվի է առնվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման ընթացքում:

1.3. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի «Լրացուցիչ պայմաններ» բաժնում:

## II. ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

**(Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)**

2.1. Համայնքի տարածքում գտնվող կարևոր շենքերի և շինությունների ճարտարապետական ոճի, կրկնվող և հաճախ կիրառվող տարրերի, ճակատների ձևավորման առանձնահատկությունների, օգտագործված շինանյութի և կառուցման եղանակի նկարագրությունը:
Համայնքի տարածքում գտնվող շենքերն ու շինությունները հիմնականում քարի ճարատարապետական ոճի են.իսկ վերջին տարիներին կառուցված նորաոճ շենքերը երկաթբետոնե կարկասային կոնստրուկտիվ լուծումներով՝ ժամանակակից բարձրորակ շինարարական նյութերի կիրառմամբ և տեխնիկական հագեցվածությամբ,հիմնադրված են ավանդականի հետ:

2.2. Նկարագրությունը հիմնավորվում է համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

## III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

3.1. Համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների նկարագրությունը, դրանց ներկայիս վիճակը, վերականգնման ու պահպանման հետ կապված խնդիրները:

3.2.Կոտայքի մարզի Առինջ համայնքի տարածքում տեղակայված հուշարձանների պետական ցուցակը բերված է համապատասխան աղյուսակում:

| Հ/Հ | Հուշարձանի անվանումը | Գլխավոր հատակագծի նշագրումը և մակերեսը /հա/ | Տարեթիվը |
|---|---|---|---|
| 1 | Ամրոց | 0,5 | 1501թ. |
| 2 | Ամրոց | 0,15 | մ.թ.ա 2-1-րդ դար |
| 3 | Գերեզմանոց Կարմրավոր | 0,066 | 13-րդ դար |
| 4 | Գերեզմանոց, Խաչքարային դաշտ | 6,33 | 12-13-րդ դար |
| 5 | Գյուղատեղի | 1,0 | մ.թ.ա 3-րդ դար |
| 6 | Եկեղեցի Սբ.Հովհաննես | 0,058 | 13-րդ դար |
| 7 | Խաչքար | | 13-րդ դար |
| 8 | ԵԱՋ-ից հուշարձան | 0,05 | 1975 |
| 9 | Մատուռ Թուխ Մանուկ | 0,004 | 4-5րդ դար |
| 10 | Մատուռ Սբ.Կարապետ | 0,0006 | 13-րդ դար |
| 11 | Վանական Համալիր Ձագավանք | 0,104 | 7-րդ դար |
| 12 | Քարայր Կացարան | - | - |

3.3.Հուշարձանները կարող են օգտագործվել գիտական, կրթական, մշակութային և ճանաչողական նպատակներով:

3.4.Համայնքի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գոտիների սահմաններում կառուցապատման ցանկացած աշխատանք իրականացնել միայն համապատասխան նախագծերի առկայության դեպքում:

3.5. Տվյալները հիմնավորվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներով, համապատասխան լուսանկարներով:

## IV. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Համայնքի տարածքում գտնվող համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող շենքերը և շինություններն են,

1) Մշակույթի տունը, ամբողջությամբ հիմնանորոգված է

2) Մանկապարտեզի շենքը,որը նոր է կառուցվում և շուտով պատրաստ կլինի շահագործման

3) Համայնքապետարանի շենքը

4) Երկրորդ  աշխարհամարտի զոհվածներին նվիրված հուշարձանի այգին,
5)Գերեզմանոցը, խաչքարային դաշտ

6) Խմելու ջրի ջրամատակարարման ցանցը,որն ունի ընդլայնման և նորացման կարիք
7)Համայնքի փողոցների ցանցը,որը  վերանորոգման կարիք  ունի
բերվում են դրանց հետ առնչվող պատմությունները, ներկայացվում են շենքերի և շինությունների ներկա վիճակը, վերականգնման և պահպանման հետ կապված խնդիրները:

4.2. Տվյալները հիմնավորվում են համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

## V. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

5.1.Համայնքի տարածքում խրախուսվում են ինչպես ավանդական,այնպես  էլ արդի ճարտարապետական ոճերը, հնարքները, դեկորատիվ տարրերը, ճակատների ձևավորման առանձնահատկությունները, դռների, պատուհանների համաչափությունները, շինարարական նյութերը և կառուցման եղանակը, որոնք պահպանվելու են համայնքի տարածքում և խրախուսվելու են նոր շենքերի կառուցման ժամանակ:

**1. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները**

ա. շենքի մասշտաբը, ճակատային լուծումներն ու դրանք շեշտադրող տարրերը (զարդաքանդակները, շքամուտքը (պորտալը), որմնախորշերը, շվաքարանները, քիվերը, կամարները և այլն).
իրականացնելիս հաշվի առնել քաղաքաշինական ձևավորված կամ նոր ձևավորվող միջավայրը չխաթարելու,այլ ընդհակառակը բավարարելու,զարգացնելու անհրաժեշտությունը.
հատուկ  ուշադրություն դարձնել փողոցի կողմի ցանկապատի և մուտքի  գեղարվեստական ձևավորմանը բարեկարգել փողոցի հարակից հատվածը միասնական ոճով և նյութերով,

բ. շենքի ճակատային մասի արտաքին բացվածքների (դռներ, պատուհաններ, ցուցափեղկեր) ձևավորումը.

գ. շենքի տանիքներն ու շենքերի հորիզոնական հարթությունները («հինգերորդ ճակատ»), ինչպես նաև ճակտոնները (ֆրոնտոնները), մանսարդները, ձեղնանցքները, եզրապատերը (պարապետները) և այլն,իրականացնել,հաշվի առնելով համայնքի քաղաքաշինական միջավայրի ձևավորման վրա դրանց մեծ ազդեցությունը
դ. շվաքարանները (տենտերը, մարկիզաները),

ե. շենքի ճակատների և տանիքի հարդարման նյութերն ու երանգավորումը, արտաքին լուսավորությունը.
**2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվաուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները**
ա. ճանապարհային ծածկույթը (նյութը, դեկորատիվ տարրերը և գունային լուծումները),

Խրախուսվում են բարձրորակ,հարատև,էկոլոգիապես մաքուր և անվնաս շինարարական նյութեր:

բ. Համայնքն սպասարկող տրանսպորտի համար նախատեսված կանգառների ձևավորումը. Ծածկոցով և նստարաններով հագեցնել , ձևավորել գեղարվեստական ճաշակով, բարձրորակ շին.նյութերով,

գ.հասարակական նշանակություն ունեցող շենքերում և տարածքներում ապահովել հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժման համար անհրաժեշտ կահավորանքը (թեքահարթակներն ու հատուկ հարմարանքները՝ լուսային, ձայնային և այլ նախազգուշացման միջոցներով),.

դ.հասարակական, ինչես նաև մասնավոր տարածքներում խրախուսվում է ֆունկցիոնալ ձևավորումը, կանաչապատումը և կահավորանքը (փոքր ճարտարապետական ձևեր կամ դեկորատիվ արվեստի նմուշներ, զրուցարաններ, շվաքարաններ, նստարաններ, շատրվաններ, դեկորատիվ ջրավազաններ, կանաչ տնկարկներ, այդ թվում՝ ուղղահայաց կանաչապատում և այլն),

ե. ճանապարհային ցանցին հարող պարիսպները, ցանկապատերը (այդ թվում՝ դալար ցանկապատերը) կառուցապատել բարձրորակ,անվնաս նյութերով ու ձևավորել մասնագիտական բարձր ճաշակով :

## 3. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները

ա. ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և հետիոտն շարժման ակտիվ գոտիների կանաչապատումն ու բարեկարգումը (փոքր ճարտարապետական ձևեր, ջրային մակերեսներ, շատրվաններ, նստարաններ, տաղավարներ, զրուցարաններ և բարեկարգման այլ տարրեր),հանդիսանում են մշտական հոգածության ոլորտներ.

բ. այգեպուրակային շինարարության կազմը (հենապատեր, ծառուղիներ, հարթակներ, աստիճաններ, ինչպես նաև ծառեր, թփեր, սիզամարգեր, ծաղկաթմբեր և գալարվող բույսեր, դեկորատիվ բուսական ծածկույթ, բազմամյա և միամյա բույսերի տեսակներ, կանաչապատման և բարեկարգման այլ միջոցներ)

գ.հետևողականորեն իրականացնել համայնքի փոշու,՝ քամու դեմ պաշտպանական գոտու,ինչպես նաև գերեզմանոցի շուրջ սանիտարական գոտու ստեղծման ստեղծման միջոցառումները (ծառատունկ, կանաչ ծածկույթների իրականացում տեղական ավանդական տնկանյութերի տեսակներից՝ տարբեր բարձրության բույսերի զուգակցմամբ):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2018թվականի N 11-Ա

## ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ ***Համայնքի ավագանին որոշում է.***

1.Առինջի համայնքապետարանի կողմից ձեռք բերված ՊՎՔ դիտահորի տափ 3(երեք) հատ անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Առինջի Կոլյա Ծառուկյանի անվան դպրոցին:
2.Առինջի համայնքապետարանի կողմից ձեռք բերված էլեկտրական զոդման ապարատը 1(մեկ) հատ անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Առինջ համայնքային տնտեսությանը ՀՈԱԿ-ին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2.ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
3.ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
4.ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
5.ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
6.ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
7.ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
8.ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2018թվականի N 12-Ա

## *ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի համաձայն, Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի և, մասնավորապես, Առինջ համայնքի տարածքում աղբահանության հետագա աշխատանքների բարելավմանն ուղղված Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի միջև 05.04.2016 թվականին կնքված վարկային համաձայնագրից (հետագա տեքստում՝ «Վարկային համաձայնագիր») բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունքների իրականացման ու պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով՝ ***Համայնքի ավագանին որոշում է.***

1.Պարտավորություն ստանձնել 2020 թվականից մինչև 2030 թվականն ընկած ժամանակատվածում հավասարաչափ մասնաբաժիններով Վարկային համաձայնագրից բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորությունների կատարմանն ուղղված՝ ենթավարկի հիմնական գումարները, հաշվարկված տոկոսագումարները, հանձնավճարները, վերաձևակերպման վճարումները, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից 2018-2019 թվականների ընթացքում Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին վճարված գումարների վճարման առումով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

2.ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ

3.ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

4.ԼԱՈՒՐԱ ՄԻՐՁՈՅԱՆ

5.ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ

6.ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

7.ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

8.ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2018թվականի N 13-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը. ***Համայնքի ավագանին որոշում է.***

Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության պետ բյուջեից 2018 թվականին սուբվենցիայի տրամադրման ծրագրին համայնքի մասնակցությանը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2.ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
3.ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
4.ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
5.ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
6.ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
7.ՍԵՐԳԵՅ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
8.ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ